8. *Ադրաևագիր։*

Է՞ր հոգեառիլ հիւսեան հաղնեցդուին՝ եօթնեաղի կիթառ
Գումարէ աստէն՝ վերին Սիոնէն՝ զերգնախուռմբ կաճառ։
Զի՞ գուք գեղուղէշ՝ հարսունք եգեմայ՝ ոգիք քաջափառ,
Ծաղկասփիւռ պճնէք՝ զայս սիրանուէր՝ մեծապանծ տաճար։
Է՞ր փայլատակեն՝ զմահարձանաւ՝ ջահ քուսապատառ.
Զմէ՞ բոլորին՝ պսակք սարգենիք՝ յոտս մշտադալար։
Դուք պարթեւական՝ գիւցազանց տուէրք՝ փառք երկնակատար,
Զի՞ թեւապարէք՝ Յաղտպեան բարձունս՝ երկնածննայ ի պար։
Ազէ, ասացէք թէ ո՞ր քաջազուն՝ մարմին ոգեսպառ
Ի չքնապակերա՝ դամբանիս ի ծոց շողշողէ ի վառ։
Սա, արհիապանծ՝ Պօղոս վարդապետ՝ պետ պերճապայծառ.
Անմահ շառաւիղ ի Խարախոչեանց՝ փթթեալ բարձրածայր։
Իւրն հայրենիք՝ վեհ արքայապանծ՝ կեսարեան գաւառ.
Սահմանք Ողմպիոյ՝ հսկող հովուութեան գահոյք և դադար։
Ջամս քառասուն պատիւ պաշտաման, վարեալ անվթար.
Ջաղօտաճաճանչ՝ զլոյս Թորգոմայ՝ փայլեցոյց ի սպառ։
Կանգնեաց եօթնաթիւ՝ ատուածաբնակ՝ յարկ գեղայարմար,
Եւ երեքտասան՝ բարձունիս մարզեաց՝ յիմաստ ւ՝ի հանճար։
Ցալիս ծերութեան՝ գիպեալ կանխագէտ՝ յօրհաս անաչառ.
Ի խորոց չիրմիս՝ ձօնէ էին զայս՝ մաղթանաց բարբառ։

Ցովհաննէս եզեկեան 1825ին իտալերէնէ թարգմանած է «Մեթոտմասիայ Ա. պաստանարան Սիրոյ» գիրքը որ իր մահէն տասը տարի յետոյ, 1853ին տպուած է Իզմիրի մէջ Ցովհաննէս Շահինեանի ձեռքով, որ իրեն բարեկամն էր։

Կ՚արժէր որ այս համբաւաւոր ուսուցիչ և գրագէտին բոլոր գրութիւնները հաւաքուելով հրատարակուէին՝ իր ընդարձակ կենսագրութեամբը միասին։

Գ. Չնաշխ

ՕՏԱՐ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹՈՎՄԱՍ ՀԷՐՊԷՐԹ ԵՒ ԻՐ ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆԸ

(1627-1629)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԿԱՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

Թովմաս Հէրպէրթ ժէ. դարուն Անգլիոյ Զարլզ Ա. թագաւորին կառավարութեան կողմէ Պարսից Շահ Ապպասին ղրկուած դեսպանութեան մէջ կը գտնուէր։

Այս դեսպանութիւնը առաջնորդուած էր Dodmore Cottonի եւ Sir Robert Sherleyէ։ Դեսպանութեան նպատակն էր Շահ Ապպասի կառավարութեան հետ պայմանաւորուիլ 100·000 ծրար հում մետաքսի համար։ Պարսից Շահը տարեկան 100·000 ծրար մետաքս պիտի յանձնէր Անգլիական East India ընկերութեան պարսից ծոցին մէջ, որուն փոխարէն պիտի ստանար պատրաստուած Անգլիական հիւսուածեղէններ։

Ներկայ վկայութիւնները թարգմանա-